

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՅԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կես տարվանը 6 բուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մեր կը ստանանք սեփական շնորհակցերը:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 բուբլ է, վեց ամսականը 6 բուբլով:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, թամաշեզի տանոյն):
Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով: ТИФЛИСЪ, Редакція газетъ «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Մեր երկրի ժողովրդագրութիւնը.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարձրագույն առևտուրը իրականում Նոստակ Գանձակից. Նոստակ Նոր-Բայազէտից. Ներքին լուսին.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աստոր-Ունդարական ազգութիւնները. Արտաքին լուսին.—ԽԱՌՆ. ԼՈՒՐԻԲ.— Հնե-ՍԱԳԻՆԵՐ.— ՅԱՅԱՍՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԵՐ ԵՐԿՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ընթերցողը կարգաքանդ կը լինի «Մշակ» մէջ ապագայը որ շուտով կատարվում է առհասարակ ժողովրդագրութիւն: Յանկալի է, որ դռնէ այդ ժողովրդագրութիւնը յայտնի կարգաքանդը մեզ երկրի ազգաբնակչութեան թիւը, որովհետեւ մինչև այժմ մեր երկրի այլ և այլ ցեղերին պատկանող բնակիչների թիւի մասին մենք դեռ ևս շատ մութ, անորոշ և անկատար հասկացողութիւն ունենք: Մինչև այժմ, սկսած այն ժամանակից, երբ ռուսաց կառավարութիւնը զբաղեցրեց մեր երկրները, մեր ստատիստիկական տեղեկութիւնները կատարելագույն չեն պարզել մեզ թէ ո՞րքան ժողովուրդ է բնակվում մեր երկրում՝ կովկասում և Անդրկովկասում: Օրինակ, հայերի թիւը մեր երկրում, մեր ստատիստիկական տեղեկութիւններին համեմատ, մինչև այժմ մեր նույն է նոյնը, ինչ որ էր քսան և հինգ, երեսուն, քառասուն տարի առաջ: Ինչպէս այն ժամանակ կովկասեան հայերի թիւը հաշուում էր 600 հազար, այնպէս էլ հիւսիսային թիւը է աւելացել մեր ստատիստիկայի մէջ, չը նայելով որ համ տեղական հայերի թիւը տարուց տարի բացմանում է, համ էլ այդ երեսուն, քառասուն տարիների ընթացքում թիւը չի սրբացել և Պարսկաստանից հայերը բաւական թիւով զաղթել են Ռուսաստանի սահմանների այս կողմը, համ էլ, վերջապէս, Ռուսաստանը նուաճել է այդ երկու հարևան երկրներից մի քանի նահանգներ, որոնք բնակչությամբ են հայերի բաւական մեծ թիւով:

Բայց մասամբ երկրի հայ ազգաբնակչութիւնը ինքն է մեղաւոր, որ ժողովրդագրութեան ժամանակ հայերի թիւը աւելի փոքր է դուրս բերվում, քան թէ նա ճշմարիտ կայ: Գիւղական դասակարգը խուսափելով ծանր հարկերից, շատ անգամ աշխատում է գիւղի ծուխների թիւը կրական թիւը աւելի աննշան ցոյց տալ, պակաս հարկ վճարելու նպատակով:

Եւ որովհետև մինչև այժմ ժողովրդագրութիւնը մեր երկրում կատարվել է միշտ միմիայն պահանջելի հարկերի քանակութիւնը որոշելու նպատակով, հասկանալի է որ ժողովրդի այդ մշտական հակարգութիւնը գէպի հարկատուութիւնը աչքի առնելու ունենալով, ժողովրդագրութեան ստացած եզրակացութիւնները միշտ անկատար պիտի եղած լինէին: Մեզանում դեռ ոչ մի

ժամանակ ժողովրդագրութիւնը կատարված չէ եղել բուն ուսումնական, ազգագրական նպատակով: Այժմ կատարվելի ընդհանուր ժողովրդագրութիւնը գուցէ առաջինը կը լինի, որ չի կրել բուն ֆիսիկական (հարկահատ) բնուէրութիւն:

Մեզ դեռ յայտնի չէ ի՞նչ հետևանքին է հասել այն ժողովրդագրութիւնը, որ նորերումս կատարվել է մեր երկրում զինուորագրութիւնը մեզ մօտ մտցնելու նպատակով բայց մենք հաւատաքանդ ենք, որ այդ վերջին ժողովրդագրութիւնը աւելի ճիշդ պիտի եղած լինէր, քան թէ նախընթացները:

Մեր երկրում վրացիների թիւը պակաս է սակայն այժմ յայտնվում է, որ նորապէս զինուորների թիւի մեծամասնութիւնը հայեր են և ոչ թէ վրացիներ: Գա առդէս պարզ ցոյց է տալիս, որ հայերի թիւը մեր երկրում անհամեմատ մեծ է վրացիների թիւից:

Սակայն չը պէտք է մոռանալ այն հանգամանքը, որ հայ անելով, պաշտօնական ժողովրդագրութիւնը մեծ մասամբ աչքի առնելու օրինակի համար թէ հայերի թիւը կովկասում և Անդրկովկասում այսօր է, բայց եթէ մինչև անգամ ընդունենք հայ զրկարեանների վերաբերութեամբ պաշտօնական թիւանշանը, այն է 600 հազար հոգի, անտարակոյս երկրի հայերի ընդհանուր թիւը շատ աւելի մեծ պիտի լինի, որովհետև գրիգորեան, կամ լուսաւորչական հայերի թիւին պէտք է աւելցնենք կաթօլիկ և բողոքական հայերի բաւական նշանաւոր թիւը, այնուհետև Գարաթայի ամբողջ թիւը անուսումնասիրելիս պարզապէս կը լինի:

Մեծ համարձակութիւն կը լինէր, ի հարկէ, առանց ստատիստիկական տեղեկութիւններ հաւաքել լինելու որոշել մի որ է և երկրի ազգաբնակչութեան թիւը, ասել օրինակի համար թէ հայերի թիւը կովկասում և Անդրկովկասում այսօր է, բայց եթէ մինչև անգամ ընդունենք հայ զրկարեանների վերաբերութեամբ պաշտօնական թիւանշանը, այն է 600 հազար հոգի, անտարակոյս երկրի հայերի ընդհանուր թիւը շատ աւելի մեծ պիտի լինի, որովհետև գրիգորեան, կամ լուսաւորչական հայերի թիւին պէտք է աւելցնենք կաթօլիկ և բողոքական հայերի բաւական նշանաւոր թիւը, այնուհետև Գարաթայի ամբողջ թիւը անուսումնասիրելիս պարզապէս կը լինի:

նը, որի երակները մէջ թուրք արիւնի մի կաթիլ անգամ չը կայ, այլ որ բազմապատ է դուռ հայ տարրից, որ պարսից տիրապետութեան ժամանակ խոյսէր ընդունելու, այնուհետև այդ թիւին պէտք է աւելցնել նրանի նահանգի երկրի և քիւրդ ազգաբնակչութիւնը, որոնց մէջ, ինչպէս և Փոքր-Ասիայի քիւրդերի մէջ, պաշտօնական և ուսումնական անձանց վկայութեամբ գտնէ 80% հայ ծագումից են, ապա վերջինք Գուրայի կողմերի թուրք անուսումնասիրելու հայոց ծագումին պատկանող զիւղերի մեծ մասը, և վերջապէս նոր նուաճած Արդուինի շրջանի ամբողջ թուրք ազգաբնակչութիւնը, որ բողոքաքանդ է մինչև այժմ: Հայերէն խօսող, խոյսէր ընդունած զուտ հայ ազգաբնակչութիւնը, — այն ժամանակ, ի հարկէ կովկասի և Անդրկովկասի հայերի թիւը 1 միլիոնից շատ աւելի կը լինի և գուցէ կը հասնի էլ 2 միլիոնի:

Ինչ է իցէ այդ բուն ստատիստիկական և էտնոգրաֆիկական հարցը այն աստիճանի հետաքրքրիչ և ուսանելի է, որ այդ հարցի պարզելը մենք անհամբերութեամբ կը սպասենք շուտով կատարվելի համառուսական, ընդհանուր ժողովրդագրութիւնից:

Յանկալի է միայն որ մեր երկրում այդ ժողովրդագրութեան կատարելը յանձնվելը ճշմարիտ համար մարդկանց:

Նոյն իսկ բուն զինուորական՝ ազգագրական (էտնոգրաֆիկական) և անարագագիտական տեսակետից այդ հարցի լուծումը շատ նշանակաւոր է: Օրինակ բնական գիտութիւնների համար, անարագագիտային հարցի լուծումը ի՞նչ տեսակ կուտուրական ցեղին կամ կուտուրական ծագման է պատկանում, ազգագրական գիտութեան համար, ստում ենք, այնքան մեծ նշանակութիւն չունի ի՞նչ մասնա թէ այս ինչ կամ այն ինչ ցեղը ի՞նչ կրօն է դասակարգում, որքան մեծ նշանակութիւն ունի իմանալ թէ նոյն ազգաբնակչութիւնը ի՞նչ ցեղին է պատկանում՝ հնդեւրոպական, սեմիտական կամ աուրանական, ուրեմն որքան աւելի կամ պակաս ընդունակ է այդ ցեղը քաղաքակրթութիւնը ենթարկվելու և քաղաքակրթութեան արգասիքները շուտով և անկեղծօրէն իրացնելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՄԱԿԻ ԱՌԵՏՆՈՐԸ ԵՐԵՒԱՆՈՍ

Այժմ Երևանի մայրամուտ բամբակի առևտուրը կատարելա կենդանութեան մէջ է: Այն օրից, երբ Մոսկովայի ֆիրմաները մեղանում յայտնվեցան, բամբակի գինը նկատելի կերպով բարձրացաւ: Անցեալ 86 թիւին աշնան, բամբակի առևտրի ժամանակ, երբ առաջին անգամ «Կարգիներն» ֆիրման որք զրեց Երևան, այն բամբակը, որը մինչև այդ ժամանակ վաճառվում էր ոչ աւել 7 թ. 50 կ., միանգամայն բարձրացաւ մինչև 8 թ. 50 կ., այն է պոկլին մի բուբլի աւելացաւ և այդ գնով էլ շարունակեց մինչև վերջ, չը նայած որ այդ ֆիրման միայն ամբերկական սեբրի բամբակ էր գնում: Իսկ այս տարի բացի առաջինից, յայտնվեցան և երկու ֆիրմաները «Ալեքսեյով» և «Չիթլիսանց»: Թէև այդ երկու ֆիրմաները սկզբում միանալով տեղական մի քանի վաճառականների հետ, պայմանագրովեցան որոշեալ գներով բամբակը գնել, բայց այդ պայմանը երկար չը շարունակվեց. յայտնի ֆիրմաները համաձայն մնալ չը կարողացան և պայմանագրանց լինելով, բամբակի գինը բարձրացրին 9 թ. 50 կ. բայց երբ, այս վերջին օրերում, յայտնվեց և չորրորդ ֆիրման Ղոզք քաղաքից, որի ներկայացուցիչները երբե հողի են, ինչպէս այս վերջինների հրապարակ դուրս գալու առաջին օրը ֆիրմաների մէջ մրցութիւնը առաջացաւ և մի

և նոյն օրում բամբակը վաճառվեց 10 թ. 20 կ. և այդպէս էլ շարունակվում է: Այս վերջին տարւ տարվայ ընթացքում բամբակը այս գնում տեսնված չէ, ինչպէս վկայում են առևտրականները. բամբակի բերքը այս տարի խիստ առատ էր, եթէ ոչ աւելի կը թանկանար:

Այդ ֆիրմաների յայտնվելուց առաջ բամբակի առևտրի մէջ առաջին տեղը բռնում էին ղոկերը, ինչպէս ամեն տեղ, իսկ վերջին տեղը տեղական մի քանի վաճառականներ. սրանք պայմանագրով բամբակը միշտ ստոր գնով էին առնում, իսկ այժմ վերջինները այլ ևս դեր չեն կատարում: Թէև այս տարի ղոկերը ևս աջողութիւն ունեցան և ամեն մէկը կարողացաւ իր պաշարը ձեռք բերել, բայց պէտք է ասած, որ վերջինների առած բամբակը գլխաւորապէս տեղական սեբրից է և այդ աջողութիւնը մասամբ էլ բամբակի առատութեանը պէտք է վերագրել:

Ինչպէս լուսն ենք, եկող տարի բացի այս ֆիրմաներից գալու են և ուրիշները, ուրեմն պարզ բան է, որ նրանք բամբակի առևտուրը իրանց ձեռք կը դնեն, և իմ կարծիքով տեղացի վաճառականները բամբակ գնել չեն կարող, որովհետև մեր վաճառականները իրանց մի քանի տասնեակ հազար բուբլներով չեն կարող մրցել Մոսկովայի միլիոնատերերի հետ, հետևաբար կը սկսեն ընկնել, չունենալով այլ ևս բամբակի առևտուրը իրանց ձեռքում:

Այն ֆիրմաների երևան գալով, ունենք Ֆիասներ, ունենք և օրուսներ. թէև նրանք իրանց ներկայութեամբ արգելք կը լինեն մեր դրամատեղեք առած դիւտուր, որով մե և նոյն դեռուրով, այն գիւղացիներ, որը ամբողջ առ միաներում արևին քրտիք թափելով հաղթ է կարողանում քանի մի պողբ բամբակ բերել շուկայ և վաճառելով իր ընտանիքի կենանը ապահովել: Պէտք է խոստովանած, որ այսօր բամբակի այս դերի հետ պահուում է դանթարում ուղղութիւն և հարկներում ճշգրտութիւն, միայն մասամբ եւս առում, որովհետև ոչ բաւել բուն նշանակութեամբ, ինչպէս ասում են, դիւտուր աչքը մի բան է տեսնում:

Բամբակի գների հետ թանգացել են և մանուֆակտուրայի ապրանքները. մի տարի առաջ այն չիլթը, որի արժիքը առնվում էր 10 կ. այս տարի 12-ով հազիւ կարելի է առնել, այնպէս որ մի մեկնայ վրա հաշուած ամեն մի արժիքը 2 կոպ. թանգացել է: Կովկասի մէջ միայն Երևանն է, որը փոքր ի շատ է բամբակ է արտահանում, բայց բամբակի հետ համեմատած, միայն Երևանի նահանգը երկու այնքան մանուֆակտուրայի ապրանք է ներմուծվում. բամբակի թանգանալով ուրեմն որքան են Ֆիասովում կովկասի միւս նահանգները, երբ բամբակ չեն արտահանում և մի և նոյն ժամանակ աճալին քանակութեամբ մանուֆակտուրայի ապրանք է ներմուծվում, այն էլ բաւական թանգ, և այնպիսի մի ժամանակ, երբ հացի թանգութեան հետ տիրում է փոքր զգաւր պակասութիւնը:

Յ. Տ. Մ.

ՆԱՄՆԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Յունվարի 7-ին

«Մշակ» անցեալ տարվայ № 133 մէջ ապոված նամակում խօսելով մեր աղքատանոցի դարարման և նրա հաշիւների ներկայ խնամք գրութեան մասին, մենք ասել էինք, որ աղքատանոցի 7—8 հազար բուբլի դրամագրկի գործադրութեան վերաբերմամբ անհամաձայնութիւն երկուս. Յովհաննէս և ս. Լուսաւորիչ եկեղեցիները ծխական անդամներն մէջ: Այդ հարցի առիթով կայացաւ երկրորդ ժողովը, բայց անդամների բնութեան պատճառով նախագահը ժողովը չը բացեց: Երբոր ժողովում տեղի ունեցան զանազան առաջարկութիւններ դրամագրկի գործադրութեան մասին: Առաջարկատեանների հոգաբարձուները մէ-

